

# Ո՞ր տարիքից է անհրաժեշտ սովորեցնել գույները



Փոքրիկների լույս աշխարհի գալուստն պես ծնողները լծվում են նրանց՝ նոր աշխարհի հետ ծանոթացման ակտիվ գործընթացին: Երեխայի կյանքի յուրաքանչյուր փուլում տարբեր մոտեցումներ են պետք է այս կամ այն իրին, առարկային կամ երևույթին լավ ծանոթացնելու համար: Հավանաբար,

նկատել էք, որ փոքրիկներն անգիտացաբար արձագանքում են գովազդներին և գույնավոր իրերին: Երեխաներն արձագանքում են գույներին, իսկ ծնողներին միայն մնում է փոքրիկին ծանոթ տեսողական երևույթներին ճիշտ անունները սովորեցնել:

Գույների ուսուցման գործընթացում առանձնացվում են մի քանի փուլեր: Մինչ դրանց անունները սովորեցնելը նախ համոզվեք, որ երեխան հստակորեն կարողանում է տարբերակել գույները: Որոշ երեխաներ մինչև 3, անգամ 4, տարեկանը չեն կարողանում դրանք տարբերակել: Սակայն մեկ ու կես տարեկանից սկսած կարող եք նրանց հետ այնպիսի խաղեր խաղալ, որոնց ժամանակ երեխան պետք է առանձնացնի գույները:

Գործընթացը պետք է սկսել նախ և առաջ գույների խմբավորման վարժույթով: Սկզբում կարելի է կիրառել 2-3 գույն՝ պարտադիր՝ սպիտակ և սև, կամ էլ հիմնական՝ կարմիր, դեղին, կապույտ և կանաչ: Ընդ որում՝ առարկաները պետք է լինեն միանման: Այսինքն՝ երեխան պետք է առանձնացնի գույնագույն շրջանակները: Կարող է նաև կարմիր լոբին առանձնացել սպիտակից (այն նաև հրաշալի կերպով է ազդում մանր մոտորիկայի զարգացման վրա):

Միայն այն բանից հետո, երբ համոզված կլինեք, որ երեխան հստակորեն

կարողանում է առանձնացնել գույները, կարող էք անցնել ավելի բարդ խմբավորումների, օրինակ՝ երեխան կարող է առանձնացնել տարբեր ձև ունեցող գույնավոր առարկաները: Կարող էք նաև երեխային հանձնարարել, որպեսզի նա այդ առաջադրանքը կատարի գդալով կամ ունեւիներով (պինգետ):



Սովորաբար 2-3 տարեկան երեխաներին շատ են դուր գալիս նմանատիպ վարժությունները:

Երբ վստահ լինեք, որ երեխան անսխալ տարբերակում է գույները, կարող էք սովորեցնել դրանց անվանումները: Դրա համար Մոնտեսորի-մանկավարժության մեջ կիրառվում է երեք քայլանի դաս, որի ժամանակ օգտագործվում են գույնավոր քարտեր կամ էլ թելի կծիկներ:

**Քայլ 1.** երեխային ցույց էք տալիս քարտերն ու ասում. «Ահա կարմիրը: Ահա դեղինը: Եվ ահա կապույտը»:

**Քայլ 2.** երեխային հարցնում էք. «Ցույց տուր կարմիրը: Ո՞ւր է կապույտը: Իսկ ո՞րն է դեղինը»:

**Քայլ 3.** ցույց էք տալիս առարկան կամ քարտը և հարցնում. «Ի՞նչ գույն է սա»:

Եթե երեխան սխալ է ասում, ապա պետք է չէ ուղղել նրան, պարզապես վերադարձեք նախորդ քայլ:

Պատրաստեց՝ Նարին Մուրադյանը  
(«TMM-Սովորեցրու ինձ ավելին – ուսուցման և զարգացման կենտրոն»-ի Էրզոթերապիստ)